DigiTec’25-ի ընթացքում արշավների մասնակցության պայմաններ

Ընդհանուր դրույթներ

1. Սույն թվականի հոկտեմբերի 10-ից մինչև հոկտեմբերի 12-ն ընկած ժամանակահատվածում «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից DigiTec’25 էքսպոյի (այսուհետ՝ DigiTec’25) ընթացքում իրականացվում են պրոդուկտային արշավներ:
2. Արշավների վերաբերյալ ողջ տեղեկատվությունը հասանելի է offers.inecobank.am կայքում:
3. DigiTec’25-ի ընթացքում Բանկի տաղավարներից որևէ մեկից պրոդուկտ ձեռք բերելով՝ ֆիզիկական անձ հաճախորդը (այսուհետ՝ Հաճախորդ) անվերապահ ընդունում է սույն արշավների մասնակցության բոլոր պայմանները:
4. Բանկն իրավունք ունի ցանկացած պահի փոփոխություն կատարել սույն փաստաթղթում, որի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը կտեղադրվի www.inecobank.am կայքում:
5. Արշավները նախատեսված են ինչպես արդեն իսկ Բանկի Հաճախորդ հանդիսացող անձանց, այնպես էլ նոր Հաճախորդների համար: Արշավին մասնակցությունը կատարվում է արշավների պայմաններին համապատասխանող գործողություններ կատարելիս և չի ենթադրում որևէ լրացուցիչ անդամավճար կամ մասնակցության այլ տեսակի վճար:

Երաշխավորված նվերներ և մեծ խաղարկություն

6. DigiTec’25-ի Բանկի տաղավարում յուրաքանչյուր Հաճախորդի, ով հետաքրքրված է Բանկի պրոդուկտային առաջարկներով, տրամադրվում է թերթիկ, որտեղ նշվում են Հաճախորդի անուն-ազգանունը և բջջային հեռախոսահամարը:
7. Յուրաքանչյուր թերթիկ պարունակում է անհատական թվային համար, որով էլ թերթիկը՝ երկու շտամպ պարունակելու դեպքում, կմասնակցի խաղարկությանը:
8. Հաճախորդի թերթիկում շտամպերը ավելացվում են յուրաքանչյուր պրոդուկտային գոտուց պրոդուկտ ձեռք բերելու պարագայում: Յուրաքանչյուր գոտուց հաճախորդը կարող է ստանալ առավելագույնը մեկ շտամպ:
9. DigiTec’25-ի ընթացքում Բանկը ներկայանում է հետևյալ պրոդուկտային առաջարկներով՝
   - Աշխատավարձային նախագծեր
   - Sprint վարկեր
   - Visa տեսակի քարտեր

10. Յուրաքանչյուր պրոդուկտային գոտուց պրոդուկտ ձեռք բերելու դեպքում հաճախորդը ստանում է երաշխավորված նվեր:
11. Sprint գոտում՝ նոր Sprint քարտ ակտիվացնելու դեպքում և DigiTec'25-ի ընթացքում այդ քարտով մեկ անկանխիկ վճարում կատարելու դեպքում Հաճախորդը կստանա նաև 5,000 ՀՀ դրամ (հարկերը ներառված չեն) բոնուս, որը կփոխանցվի Հաճախորդի Sprint քարտի հաշվեհամարին:
12. Հաճախորդը, ով ստանում է մասնակցության թերթիկ, տալիս է համաձայնություն, որ խաղարկության ընթացքում հաղթող ճանաչվելու դեպքում իր անուն-ազգանունը կարող է հրապարակվել Բանկի կողմից:
13. Երբ Հաճախորդի մասնակցության թերթիկում առկա են երկու և ավելի շտամպեր, Բանկի աշխատակիցը ուղեկցում է նրան խաղարկության տուփի մոտ, որտեղ Հաճախորդը գցում է թերթիկի այն հատվածը, որը պարունակում է իր տվյալները և անհատական համարը: Թերթիկի մյուս հատվածը, որը պարունակում է միայն անհատական համարը, մնում է Հաճախորդի մոտ:
14. Խաղարկությունը նախատեսվում է իրականացնել 12.10.2025թ.-ին, ժամը 19:00-ին, DigiTec'25-ի Բանկի տաղավարում:
15. Հաղթող ճանաչված հաճախորդները հնարավորություն կունենան նվերները ստանալու տեղում՝ DigiTec'25-ի Բանկի տաղավարում 12.10.2025թ.-ին մինչև ժամը 20:00-ը, կամ Բանկի Գլխամասային գրասենյակից (ք. Երևան, Թումանյան 17) մինչև 15.10.2025թ.-ը, ժամը 18:00:
16. Խաղարկվելու են հետևյալ տեսակի մրցանակները՝
    - 1 տարի ժամկետով մարզասրահի բաժանորդագրություն – 3 հատ
    - «Արի տանեմ» տուփ՝ սպորտային և էքստրեմալ փորձառություններով – 25 հատ
    - «Արի տանեմ» տուփ՝ 1 ամսյա սպորտային բաժանորդագրություններով – 25 հատ
17. Խաղարկվող նվերները հաճախորդներին տրամադրվելու են հավաստագրերի միջոցով:
    - «Արի տանեմ» տուփի դեպքում հավաստագիրը պարունակելու է QR կոդ՝ առաջարկներին ծանոթանալու և նվերը ակտիվացնելու համար նախատեսված պրոմոկոդ:
    - Մարզասրահի բաժանորդագրության դեպքում Հաճախորդին տրամադրվում է համապատասխան հաստատման փաստաթուղթ:
18. Սույն փաստաթղթով սահմանված գործողությունների արդյունքում հաղթող ճանաչված Հաճախորդները թերթիկում նշված հեռախոսահամարի միջոցով տեղեկացվում են նվերի հանձնման գործընթացի մանրամասների վերաբերյալ:
19. Արշավի շրջանակներում Բանկի կողմից սահմանված նվերները շահողի պահանջով ենթակա չեն փոխարինման այլ ապրանքի, ծառայության կամ գումարի հետ:

20. Բանկը պատասխանատվություն չի կրում Արշավի շրջանակներում սահմանված նվերների որակի և համագործակցող կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների համար:
21. Սույն փաստաթղթով սահմանված գործողությունների արդյունքում շահումները հաղթող Հաճախորդները թերթիկում լրացված հեռախոսահամարի միջոցով տեղեկացվում են նվերների հանձնման գործընթացի մանրամասների վերաբերյալ: Հաղթող Հաճախորդը նվերը ստանալու համար, կախված նվերի տեսակից, ըստ Բանկի պահանջի, պարտավոր է Բանկի համապատասխան ներկայացուցչին ներկայացնել իր անձը հաստատող փաստաթղթի բնօրինակը, թերթիկի անհատական թվային համարի հատվածը, ինչպես նաև պարտավոր է ստորագրել նվերի ստացման վերաբերյալ ակտը՝ անհրաժեշտության պարագայում: Նշված գործողություններից ցանկացածը կատարելուց հրաժարվելու կամ կատարելու անհնարինության դեպքում Բանկի հայեցողությամբ շահումը ենթակա չէ հանձնման, և Բանկն իրավասու է անվավեր համարել նշված շահումը՝ չունենալով որևէ լրացուցիչ պարտավորություն տվյալ Հաճախորդի հանդեպ:
22. Եթե Բանկից անկախ ցանկացած պատճառով անհնար լինի կապ հաստատել հաղթող Հաճախորդի հետ, վերջինիս կողմից թերթիկում լրացված հեռախոսահամարի միջոցով երեք զանգի արդյունքում, որոնց համար՝ որպես զանգ կատարելու միջակայք սահմանվում է նվազագույնը 1 ժամը, ապա Բանկն իրավասու է անվավեր համարել տվյալ շահումը՝ չունենալով որևէ լրացուցիչ պարտականություն/պարտավորություն Հաճախորդի հանդեպ:
23. Հաճախորդը կրում է ճշգրիտ և վավեր հեռախոսահամարի տրամադրման պարտականությունը և դրա ոչ պատշաճ կատարման հետևանքով առաջացած բոլոր ռիսկերը:

Visa քարտապանների համար հետվճար /cashback/ արշավ.

24. DigiTec’25-ի ընթացքում «Dzen with Inecobank» միջոցառման բարերում կատարված վճարումների դիմաց Բանկի կողմից թողարկված Visa քարտապանների (այսուհետ՝ Քարտապան) համար հաշվարկվելու և վճարվելու է հետվճար (cashback) 10%-ի չափով, առավելագույն գումարը՝ 5,000 ՀՀ դրամ:
25. Հետվճարը հաշվարկվում է հետևյալ քարտերով կատարված վճարումների համար՝ Visa Digital, Visa Classic, Visa Gold, Visa Platinum, Visa Signature, Visa Infinite:
26. Արշավի ընթացքում հաշվարկվում է Քարտապանի՝ 24-րդ կետով սահմանված յուրաքանչյուր գործող քարտով կատարված վճարումները:
27. Արշավի շրջանակներում միանվագ հետվճարը Հաճախորդին տրամադրվում է առանց որևէ հարկային պարտավորության: Հարկային պարտավորությունների կատարումը ստանձնում է Բանկը:
28. Արշավի մասնակցի քարտը միանվագ հետվճարի տրամադրման պահին պետք է լինի գործող:

29. Վճարային գործարքները հաշվարկելու համար, հիմք է ընդունվում գործարքի կատարման ամսաթիվը:
30. Բանկի կողմից զեղծարար գործարքի վերաբերյալ կասկած ունենալու պարագայում Հաճախորդի մասնակցությունը կարող է անվավեր ճանաչվել: Զեղծարար գործարքի չափանիշները սահմանվում և որոշվում են Բանկի կողմից:
31. Կից քարտերով կատարված գործարքների դիմաց հետվճար չի հաշվարկվելու և չի վճարվելու Քարտապանին:
32. Արշավի գործողության ընթացքում և վերջինիս շրջանակներում հաշվարկված միանվագ հետվճարը փոխանցվելու է Քարտապանի ընթացիկ դրամային հաշվին մինչև 30.11.2025թ.-ը:

Բանկի մասին լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքէջ կամ զանգահարել 010-510-510 հեռախոսահամարով:

«Ինեկոբանկ» ՓԲԸ-ն վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից: